# Ինչպես գտնել նվիրված ընկերներ

**Ցուցումներ:** Այս վարժությունը կատարիր հանգիստ միջավայրում: Սուրբգրային համարներն ընթերցելիս պատկերացրու, որ դու ներկա ես նկարագրվող իրադարձությանը: Մտովի պատկերացրու տեսարանը: Լսիր մարդկանց ձայները: Փորձիր զգալ, թե գլխավոր կերպարներն ինչ են զգում: Կենդանի դարձրու աստվածաշնչային արձանագրությունը:

**Գլխավոր կերպարներ:** Հովնաթան, Դավիթ և Սավուղ

**Ներկայացված դրվագը:** Դավիթը սպանում է Գողիաթին, Հովնաթանը դառնում է նրա ամենալավ ընկերը:

## ❶ *ՎԵՐԼՈՒԾԻՐ ԴՐՎԱԳԸ (ԿԱՐԴԱ Ա ԹԱԳԱՒՈՐԱՑ 17:57–18:11; 19:1; 20:1–17, 41, 42):*

Նկարագրիր, թե քո պատկերացմամբ ինչ տեսք կարող էր ունենալ Սավուղը (հուշող համար՝ Ա Թագաւորաց 10:20–23): ____________________

____________________

Երբ Դավիթը հանդիպեց Հովնաթանին, հավանաբար պատանի էր: Ի՞նչ ես կարծում, ինչպիսի՞ արտաքին ուներ նա (հուշող համար՝ Ա Թագաւորաց 16:12, 13):

____________________

Քո կարծիքով՝ ի՞նչ զգացումներ էր արտահայտում Դավթի ու Հովնաթանի ձայնը, երբ նրանք բաժանվում էին իրարից, ինչպես որ նկարագրված է Ա Թագաւորաց 20 գլխի վերջում: ____________________

____________________

____________________

## ❷ *ԱՎԵԼԻ ՇԱՏ ԽՈՐՀՐԴԱԾԻՐ:*

Աստվածաշնչում նշվում է, որ «Յովնաթանի սիրտը կապուեցաւ Դաւիթի սրտի հետ», կամ ինչպես մեկ ուրիշ թարգմանության մեջ է ասվում, «Դավիթն ու Հովնաթանը դարձան շատ մտերիմ ընկերներ» (Ա Թագաւորաց 18:1, Contemporary English Version): Ի՞նչ հատկություններ ուներ Դավիթը, որոնք գրավեցին Հովնաթանին (հուշող համար՝ Ա Թագաւորաց 17:45, 46): ____________________

____________________

____________________

Հովնաթանը մոտավորապես 30 տարով մեծ էր Դավթից։ Ըստ քեզ՝ ի՞նչը օգնեց նրանց դառնալու «շատ մտերիմ ընկերներ»՝ չնայած տարիքային մեծ տարբերությանը։ ________

Որո՞նք են այս անկեղծ ընկերության հատկանշական կողմերը (հուշող համար՝ Առակաց 17:17; 18:24)։ ________

Ինչո՞ւ Հովնաթանը Դավթի հանդեպ իր նվիրվածությունը առավել համարեց իր հոր հանդեպ ունեցած նվիրվածությունից։ ________



### ❸ ԿԻՐԱՌԻՐ ՍՈՎՈՐԱԾԴ։ ԳՐԻ ԱՌ, ԹԵ ԻՆՉ ՍՈՎՈՐԵՑԻՐ...

ընկերության մասին։ ________

նվիրվածության մասին։ ________

տարիքով մեծ մարդկանց հետ ընկերություն անելու մասին։ ________

այն մասին, թե ինչպես կարող ես գրավել լավ ընկերների։ ________

### ❹ ԱՅՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ Ո՞Ր ԴՐՎԱԳՆ ԷՐ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՀԵՏԱՔՐՔԻՐԸ ԵՎ ԻՆՉՈ՞Ւ։

________

www.jw.org © 2010 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania